ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հունիսի 2017 թվականի N 66-Ա

Հ-46 Մ2-ՏԱԹԵՎ-ԱՂՎԱՆԻ-ԿԱՊԱՆ-Մ2 ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԻՃԱԿՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.14-րդ կետի «բ» ենթակետով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տանձավեր, Վերին Խոտանան և Աղվանի համայնքների ղեկավարների՝ Կապան-Տաթև ավտոմոբիլային ճանապարհի վերանորոգում իրականացնելու վերաբերյալ համատեղ դիմումին ընթացք տալու նպատակով՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. Հ-46 Մ2-Տաթև-Աղվանի-Կապան-Մ2 ավտոմոբիլային ճանապարհի ընդհանուր վիճակն ուսումասիրելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:

2. Աշխատանքային խմբին՝

1) 5 աշխատանքային օրվա ընթացքում տեղում ուսումնասիրել Հ-46 Մ2-Տաթև-Աղվանի–Կապան-Մ2 ավտոմոբիլային ճանապարհի ընդհանուր վիճակը և արդյունքները ներկայացնել քննարկման□

2) քննարկման արդյունքներով երկու աշխատանքային օրվա ընթացքում նախապատրաստել համապատասխան առաջարկություն՝ Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն ներկայացնելու նպատակով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Վ. ՀԱԿՈԲՅԱՆ

2017թ. հունիսի 27
ք. Կապան

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզպետի 2017
թվականի հունիսի 27-ի N66-
Ա որոշման

Ա Ն Հ Ա Տ Ա Կ Ա Ն Կ Ա Զ Մ

Հ-46 Մ2 - ՏԱԹԵՎ -ԱՂՎԱՆԻ -ԿԱՊԱՆ – Մ-2 ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԻՃԱԿՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

Ռ.Ավետիսյան	-Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ (աշխատանքային խմբի ղեկավար)
Ս.Աղաբեկյան	-Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ
Ա.Կարապետյան	-«Կապանի ՃՇՇ» ՍՊԸ տնօրեն (համաձայնությամբ)
Մ.Թումանյան	- Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տանձավեր համայնքի ղեկավար (համաձայնությամբ)
Կ.Հակոբյան	- Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Վերին Խոտանան համայնքի ղեկավար (համաձայնությամբ)
Ա.Սուքիասյան	- Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Աղվանի համայնքի ղեկավար (համաձայնությամբ)

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար՝ **Ռ.Սարգսյան**